

Համաժամանակյա և հաջորդական թարգմանությունների առանձնահատկությունները

Սույն հոդվածում քննարկվում է բանավոր թարգմանության դերն ու նշանակությունը, համաժամանակյա և հետևողական թարգմանությունների նմանություններն ու տարբերությունները, ինչպես նաև թարգմանչի դերը այս գործընթացում: Արագ զարգացող աշխարհում բանավոր թարգմանության ծառայություններին դիմում են շատերը, սակայն համաժամանակյա և հետևողական թարգմանությունների նմանություններն ու տարբերությունները քչերն են պատկերացնում: Ուստի շատ կարևոր է ճիշտ պատկերացում կազմել այս երկու գործընթացների վերաբերյալ:

Բանալի բառեր. գրավոր և բանավոր թարգմանություն, համաժամանակյա թարգմանություն, հետևողական թարգմանություն, մտավոր մեխանիզմներ, թարգմանության համապատասխանություն:

Մարդկության պատմության ողջ ընթացքում գրավոր և բանավոր թարգմանություններն ունեցել են էական նշանակություն ոչ միայն միջանձնային հաղորդակցման, այլ նաև տարբեր լեզուներով առկա ամենանշանակալից գիտական և հոգևոր տեքստերն ընկալելու և լավագույնս կիրառելու համար: Ունենալով այսքան մեծ կարևորություն, այնուամենայնիվ, թարգմանաբանությունը որպես ակադեմիական առարկա ձևավորվել է ընդամենը մի քանի տասնամյակ առաջ:

Թարգմանություն բառը կարող է վերաբերել թե՛ գործընթացին (աշխատանքը կամ գործը թարգմանելու ընթացքին), թե՛ այս գործընթացի արդյունքին (թարգմանված տեքստին):

Ընդհանուր առմամբ թարգմանության գոյություն ունեցող տարբեր տեսակները միանման մոտեցումներ, միջոցներ և հնարներ ունեն, սակայն ըստ թարգմանության գործընթացի ֆիզիկական չափանիշի տարբերակում ենք գրավոր և բանավոր թարգմանություններ:

Ըստ Ռ.Կ. Մինյար-Բելոռուչևի թարգմանական գործընթացը կատարվում է հետևյալ մտավոր մեխանիզմների շնորհիվ.

1. սկզբնաղբյուր տեքստի ընկալման մեխանիզմներ
2. հիշելու մեխանիզմներ
3. մեկ լեզվից մյուսն անցնելու մեխանիզմներ
4. թարգմանության ձևակերպման մեխանիզմներ

5. թարգմանական գործողությունների սինխրոնի-
զացման մեխանիզմներ (Миньяр-Белоручев,
1980, 147):

Վերը թվարկված մեխանիզմները վերաբերում են թե՛
գրավոր և թե՛ բանավոր թարգմանությանը:

Սակայն շատ հաճախ թարգմանությունը դիտվում է
որպես լեզվաբանական աշխատանքի արդյունք, այլ ոչ թե
գործընթաց, որտեղ հաշվի չի առնվում թարգմանչի դերը, և
թարգմանությունը հաջողված է համարվում այն դեպքում,
երբ աղբյուր տեքստի յուրաքանչյուր իմաստային միավորի
համար թիրախ լեզվում գոյություն ունի քիչ թե՛ շատ համա-
պատասխան արտահայտություն: Գիտնականներ Տ. Ռ.
Լևիցկայան և Ա. Մ. Ֆիտերմանը՝ թարգմանության համա-
պատասխանություն՝ հասկացույթը մեկնաբանում են այս-
պես. Շամպայատասխանությունը բնագիր տեքստին առա-
վելագույնս մոտ լինելն է ինչպես բովանդակության, այն-
պես էլ ձևի փոխանցման դեպքում՝ պահպանելով այն լեզվի
բոլոր լեզվական նորմերը, որով կատարվում է թարգմա-
նությունը՝ (Левицкая, Фитерман 1963, 16): Նման մոտեցումը
սահմանափակվում է միայն գրավոր թարգմանության շր-
ջանակներում և ուսումնասիրության կենտրոնում հայտն-
վում ու վերլուծության են ենթարկվում թիրախ լեզվում կի-
րառելի բոլոր հնարավոր տարբերակները:

Այս կերպով, փաստորեն, բանավոր թարգմանության
տարբեր տեսակների դերն ու նշանակությունը անտեսվում
է, քանի որ բանավոր թարգմանության դեպքում համարժեք
բառ կամ արտահայտություն գտնելը ցանկալի է, բայց ոչ

պարտադիր: Մարդիկ միշտ էլ միջնորդների օգնության կարիք են ունեցել մեկ այլ լեզվով խոսողի հետ հաղորդակցվելու համար: Ուստի բանավոր թարգմանությանը պատշաճ ուշադրություն պետք է դարձնել, մանավանդ, ելնելով այն հանգամանքից, որ ի տարբերություն գրավոր թարգմանությանը, այս բնագավառում ուսումնասիրություններ քիչ են արվել և կարիքը միանշանակ կա:

Որպես կանոն, բանավոր թարգմանության պահանջներն այլ են. այստեղ կարևորությունը տրվում է աղբյուր տեքստի հիմնական բովանդակության, իմաստի կամ տեղեկության փոխանցմանը: Այս պահանջները հիմնականում պայմանավորված են այն միջավայրով, որտեղ իրականացվում է բանավոր թարգմանությունը: Միջավայրը կարող է լինել և՛ բանակցություն, և՛ բանավեճ, և՛ գիտաժողով, ուստի մասնակիցների համար, ում լեզվական կողերը տարբերվում են, շատ կարևոր է, որպեսզի փոխանցվող տեղեկությունը ճշգրիտ տեղ հասնի: Այսինքն՝ հասցեատիրոջ համար անհրաժեշտ է ստանալ իրեն ուղղված տեղեկությունը, պատասխանը կամ հարցը հնարավորին չափ արագ՝ անկախ այն բանից, թե թարգմանված տեքստն ինչքանով է համարժեք սկզբնաղբյուրին:

Բանավոր թարգմանիչները հաճախ թարգմանություն կատարելիս առերեսվում են տարբեր խնդիրների՝ կապված խոսողի, լսողի, լեզվի և փոխանցվող հաղորդագրության բովանդակության հետ: Բանավոր թարգմանիչն այն մարդն է, ով աղբյուր լեզվի արտահայտությունը կամ միտքը փոխանցում է թիրախ լեզվի համարժեք արտահայտու-

թյամբ: Նրա գործը աղբյուր լեզվով խոսողի հաղորդագրության յուրաքանչյուր իմաստային միավորի և զգացմունքի փոխանցումն է թիրախ լեզվի լսարանին: Միանշանակ, լսարանի համար շատ կարևոր է ստանալ նաև զգացմունքների փոխանցումը, քանի հաճախ դրանից է կախված իմաստի ճիշտ ընկալումը:

Հարկ է նշել, որ բանավոր թարգմանության գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մեկ լեզվից մյուսին արագ անցնելու թարգմանչի ունակությամբ: Հավասարապես երկու լեզվի տիրապետելը բավարար չէ լավ թարգմանիչ լինելու համար և չի ենթադրում մեկ լեզվից մյուսին անցնելու ճիշտ կարողություն: Իհարկե, սա կարող է լավ հիմք ծառայել հետագա հմտությունները զարգացնելու համար, սակայն երկու լեզվի հավասարապես տիրապետելը պարզապես երկլեզվյա մարդու ունակություն է:

Բանավոր թարգմանություն կատարելու համար թարգմանիչը պետք է ստանա և հասկանա հնչող հաղորդագրությունը և հետո արտահայտի ասվածի իմաստը թիրախ լեզվով՝ միննույն ժամանակ հասնելով իմաստային ամբողջական ճշգրտության:

Թարգմանության արդյունքում թիրախ լեզվում հնարավոր է լինեն բառային բացթողումներ կամ հավելումներ, սակայն դրանք չեն կարող ոչ մի կերպ պարունակել իմաստային միավորների բացթողումներ:

Ի տարբերություն գրավոր թարգմանության, բանավոր թարգմանությունը կատարվում է ավելի արագ և սեղմ ժամանակահատվածում, քանի որ այն կատարվում է իրական

միջավայրում (գիտաժողով, քննարկում, գործնական հանդիպում, դատավարություն և այլն) և տեղի է ունենում մասնակիցների համար և նրանց ներկայությամբ: Իր առջև դրված խնդիրը հաջողությամբ իրականացնելու համար թարգմանիչը կատարում է մի շարք իրար հետ փոխկապակցված քայլեր, որոնք են.

1. ստանալ հաղորդագրություն
2. կենտրոնանալ առկա պահանջի կամ խնդրի վրա
3. հասկանալ և հիշել հաղորդագրությունը
4. վերլուծել այն
5. մտքում ձևակերպել ասելիքը
6. արտահայտել և բարձրաձայնել այն թիրախ լեզվով:

Մինչ այժմ նշված բոլոր առանձնահատկությունները վերաբերում էին թե՛ համաժամանակյա և թե՛ հետևողական թարգմանություններին: Սակայն երկուսն էլ նմանություններից զատ ունեն նաև տարբերություններ, որոնցից հիմնականներն ու առավել նշանակալիցները հետևյալներն են (Мирам, Дайнеко, Тарануха, Грищенко, Гон, 2006, 138).

1. Համաժամանակյա թարգմանություն կատարելիս թարգմանիչի ժամանակը խիստ սահմանափակ է:
2. Ի տարբերություն հաջորդական թարգմանության, համաժամանակյա թարգմանության ընթացքում թարգմանվող տեքստերն ավելի կարճ են:
3. Եթե հաջորդական թարգմանության ընթացքում թարգմանիչը հնարավորություն ունի սխալներն ուղղելու և նորից սկսելու միտքը, ապա համաժամանակյա թարգ-

մանության դեպքում թարգմանիչը ժամանակային առումով չի կարող նույնը անել:

Հաջորդական թարգմանության ընթացքում թարգմանչի համար անհնար է դառնում շատ մոտ լինել աղբյուր տեքստին հնչող տեքստերի երկարությունը պատճառով, իսկ համաժամանակյա թարգմանության ընթացքում սահմանափակ ժամանակում տեղավորվելու համար թարգմանությունը կատարվում է թիրախ լեզվի քերականությանը համապատասխան:

Հաջորդական թարգմանության դեպքում, մինչ խոսողն արտաբերում է իր ասելիքը, թարգմանիչը կարող է նշումներ կատարել և նույնիսկ հապավումների և կրճատումների միջոցով ձևակերպել այն, ինչ պատրաստվում է թարգմանել: Այս պարագայում թարգմանիչն ունի առնվազն 10-15 վայրկյան ժամանակ իր միտքը ձևակերպելու համար և կարող է հասնել ավելի շատ հստակության, ավելի քիչ կտատանվի և չի դիմի անտեղի կրկնության օգնությանը (Երբեմն ոչ շատ հմուտ թարգմանիչն անկախ իր կամքից կարող է կրկնել արդեն իսկ արտահայտած միտքը, որպեսզի հասցնի մտքում կարգավորել հաջորդ նախադասությունը: Սա, իհարկե, երբեմն կարող է էլ ավելի շփոթեցնել թարգմանչին և խոսողի արտաբերած հաջորդ միտքը թերի կամ ոչ ամբողջական հասկանալու պատճառ դառնալ: Սակայն կրկնությունը երբեմն նաև օգնում է թարգմանչին վերագտնելու մտքերը):

Ի տարբերություն համաժամանակյա թարգմանության, հաջորդական թարգմանություն կատարելիս թարգմանիչը

լսում է խոսողի ամբողջական նախադասությունը, ճիշտ ընկալում է նրա միտքն ու ասվածի բովանդակությունը, հետո միայն կատարում թարգմանություն: Մինչդեռ համաժամանակյա թարգմանության դեպքում թարգմանությունը կատարվում է խոսողի խոսելու հետ մեկտեղ, ուստի թարգմանիչը ստիպված է թարգմանել և միևնույն ժամանակն լսել հաջորդ միտքը կամ նախադասությունը:

Միևնույն ժամանակ և՛ լսելը, և՛ թարգմանելը, և՛ տասնյակ բառեր հիշելը կարող է շեղել թարգմանչի ուշադրությունը, հետևաբար թարգմանիչը փորձում է հիշել ոչ թե խոսողի բառերը, այլ ասվածի միտքը:

Համաժամանակյա և հաջորդական թարգմանությունների տարբերություններն ավելի շատ են, քան նմանությունները, ուստի շատ դժվար է միևնույն ժամանակ լինել լավ թարգմանիչ երկու տեսակներում էլ, քանզի ասվածից կարելի է եզրակացնել, որ համաժամանակյա և հաջորդական թարգմանությունները ենթադրում են տարբեր գործընթացներ և կարելի է դրանք համարել տարբեր մասնագիտություններ:

Գրականության ցանկ

1. Gile, D. (1995) *Basic Concepts and Models in Interpreter and Translator Training*. // Amsterdam, Benjamins
2. Комиссаров, В. Н. (2002) *Современное переводоведение. Учебное пособие*. // М. ЭТС
3. Миньяр-Белоручев, А. П. (2008) *Английский язык. Учебник устного перевода*. // М., Экзамен
4. Миньяр-Белоручев, А. П. (1969) *Последовательный перевод*. // М., Воениздат
5. Фомин, С. К (2006) *Последовательный перевод. Книга преподавателя*. // М., Восток-Запад

Հղումներ

1. Левицкая, Т. Р., Фитерман А. М. (1963) *Теория и практика перевода с английского языка на русский*. // М., Издательство литературы на иностранных языках
2. Миньяр-Белоручев, А. П. (1980) *Общая теория перевода и устный перевод*. // М., Воениздат
3. Мирам, Г. Э., Дайнеко, В. В., Тарануха, Л. А., Грищенко, М. В., Гон А. М. (2006) *Основы перевода*. // Киев, Издательство “Ника-Центр”

Peculiarities of Simultaneous and Consecutive Interpretation

The article discusses the role and importance of oral translation or interpretation, some similarities and differences of simultaneous and consecutive interpretation, as well as the role of the interpreter in the process of translation. In the rapidly developing world many people have a need for the services of oral translation, but few of them have any idea about the similarities and differences between simultaneous and consecutive translations.

Key words: written and oral translations, simultaneous interpretation, consecutive interpretation, mental mechanisms, translation adequacy.

Наре Джабагян
ЕГУ

Особенности синхронного и последовательного перевода

В статье обсуждаются роль и значения устного перевода, и некоторые сходства и различия синхронного и последовательного перевода, а также роль переводчика в процессе перевода. В этом быстро развивающемся мире многие пользуются услугами устного перевода, но мало кто понимает сходства и различия, а также другие особенности синхронного и последовательного перевода.

Ключевые слова: письменный и устный перевод, синхронный перевод, последовательный перевод, умственные механизмы, адекватность перевода.